12252

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«31» 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0152-23

Ձեռնարկողը՝ ***«Ռեմ Գրուպ» ՍՊԸ***
ք. Երևան, Արշակունյաց 46

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոց թիվ 14 հողամաս հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0152-23

«31» օգոստոսի 2023թ.

«Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոց թիվ 14 հողամաս հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ռեմ Գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք.Երևան, Արշակունյաց 46

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը նախատեսվում է իրականացնել ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Մ.Ֆրունզեի փողոց թիվ 14 հողամաս հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից լուծումներով բազմաբնակարան բնակելի շենք: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Մ.Ֆրունզեի փողոց թիվ 14 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքային նախագծի համար հիմք է հանդիսացել N01/18-07/2-28118-349 տրված 06.05.2022թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Բազմաբնակարան բնակելի շենքը բաղկացած է 16 վերգետնյա և 3 ստորգետնյա հարկերից: Ստորգետնյա հարկերը ծառայում են որպես ավտոհանգրվան 178 մեքենաների համար (79,1%) ինչպես նաև նախատեսվել են հեծանիվների կայանատեղեր: 30 (37,97%) կայանատեղեր նախատեսված են էլեկտրական մեքենաների լիցքավորման հնարավորությունով:

Առաջին հարկը ծառայում է որպես հասարակական նշանակության տարածք՝ ընդհանուր 1409,36քմ: 2-16 հարկերը բնակելի են՝ բաղկացած 225 բնակարանից: Տանիքը նախատեսվում է շահագործել բնակիչների հանգստի համար: Տանիքը հարթ է, կազմակերպված է ներքին ջրահեռացում: Բազմաբնակարան բնակելի շենքի ±0,000 նիշում նախատեսված են մուտքային հանգույցներ, վթարային ելքեր և հասարակական տարածքներ՝ բնակելիից առանձնացված մուտքերով: Մուտքային հանգույցները համալրված կլինեն թեքահարթակներով՝ սակավաշարժ խմբերի համար: Առաջին հարկի նախամուտքերում նախատեսվում են բաժանորդային փոստարկղեր և մանկասայլակների կայանատեղեր:

Համալիրի բակային տարածքում նախատեսված է մանկական խաղահրապարակ, սպորտային տարածք, բնակիչների հանգստի գոտիներ: Ավտոմեքենաների մուտքը բակային տարածք, բացառությամբ հրշեջ և շտապօգնության մեքենաների, արգելված է: Համալիրի կոնսոլային հատվածի տակ ապահովված է նվազագույնը 4,5մ բարձրություն, ինչն ապահովում է հրշեջ մեքենաների անարգել տեղաշարժ: Եռահարկ ավտոհանգրվանում նախատեսվում է համապատասխանաբար՝ -4,500 նիշում 54 կայանատեղի, -7,800 նիշում 61 կայանատեղի, -11,100 նիշում 63 կյանատեղի, ընդհանուր՝ 178 կայանատեղի: Ավտոհանգրվանում նախատեսվում է ըստ նորմատիվ պահանջների հակահրդեհային, ծխահեռացման հրդեհամարման, օդափոխության, արտակարգ իրավիճակի ազդարարման համակարգեր: Ավտոհանգրվանի վթարային ելքերում նախատեսվում են հակահրդեհային դռներ՝ EIS 120, այլ վթարային ելքեր EIS 60՝ հակախուճապային բռնակներով: Դռները ինքնափակվող են և նախամուտքերում նախատեսվում է օդի մղման համակարգ, որը թույլ չի տալիս ծխի ներթափանցումը վթարային ելք և աստիճանավանդակ: Բնակելի շենքի առաջին հարկի երեսպատումը նախատեսվում է իրականացնել սրբատաշ սև տուֆի, բազալտի կիրառմամբ, 2-16 հարկերի երեսպատումը կերամոգրանիտ չոր-օդափոխվող շարվածքներով, հրակայունության չվառվող դասի ջերմամեկուսիչ նյութերով և մուլտիֆունկցիոնալ թրծած երկշերտ ապակեփաթեթներով:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ՝

Հողի մակերես՝ 3693,0քմ:

Կառուցապատման մակերես՝ 1926,10քմ:

Անջրանցիկ մակերևույթների մակերես՝ 265,74քմ:

Կանաչապատման մակերես՝ 1501,16քմ:

Ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 3302,5քմ:

Բնակարանների քանակ՝ 225:

Ընդհանուր 178 կայանատեղ (79,1%):

Հասարակական տարածքի ընդհանուր մակերես՝ 1389,89քմ:

Բնակելի ընդհանուր մակերես՝ 20 559,6քմ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր:

Ջեռուցումը և օդափոխությունը համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ՝ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով, օդափոխությունը իրականացվելու է արհեստական արտածման համակարգերի միջոցով, օդահեռացումը նախատեսվելու է երկու զոնաներից՝ վերևի և ներքևի, իսկ հասարակական տարածքներից օդի արտածումը նախատեսվելու է բնական:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններն ու վիտրաժները, տանիքի հարկի ջերմամեկուսացումը: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու են՝ համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով Վեոլիա Ջուր ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել, Արշակունյաց պողոտայով անցնող D=500մմ ջրատարից, կոյուղին՝ Ֆրունզեի պողոտայով անցնող d=800մմ կոյուղատարից: Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարրաներով: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում բազմաբնակարան բնակելի շենքի էլեկտրամատակարարումը 1271 կՎԱ ծախսով կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ լիցենզավորված կազմակերպության կողմից մշակված նախագծի համաձայն:

Բազմաբնակարան բնակելի շենքի գազաֆիկացումը Q=865 խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել ԳԲԿ Երևան-2 սնող սնող Dպ-700 կողմնատար գազատարից: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 1460 օր՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլտվության տրամադրման օրվանից:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 20.2տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 680խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ 35200խմ ծավալով/ծածկագիրը՝ 3140110008995/ կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- շինարարական /փոշեգոյացնող/աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան,

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝
- շինարարական նյութերը տեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1501,16քմ: Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք՝ մոտ 150խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 48 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման համապատասխան:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն/ ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:

3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով իրականացնել հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

5.Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

6.Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1700000 դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Ներքին գործերի», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:
- Շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով:
-Շինարարության ընթացքում անհրաժեշտության դեպքում իրականացնել ջրցանի ծավալների ավելացում:
-Ըստ անհրաժեշտության նախատեսել շրջանցիկ ճանապարհ՝ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ երթևեկելի ճանապարհները չծանրաբեռնելու նպատակով:
- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:
-Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները:
- Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ռեմ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մ. Ֆրունզեի փողոց թիվ 14 հողամաս հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական

գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան